ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2024/102

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2024 թ. N 102

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «**Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ**» **ՊՈԱԿ**
Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճ. 3/1
Նախորդ հավատարմագրման
մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ. փետրվարի 15-ին քննարկեց «**Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի**» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	12 հունվարի 2023 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում	06 հունիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	03-06 հոկտեմբերի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	07 դեկտեմբերի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	22 հունվարի 2024 թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 1-ը՝ **«Որակի ներքին ապահովման համակարգ»** գնահատվել է անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում

Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջն իրականացնում է իր առաքելությանն ու աշխատաշուկայի պահանջներին համահունչ ՄԿԾ-ներ, ակնկալվող վերջնարդյունքները համապատասխանում են ՈԱԾ-ին: Առկա են ՄԿԾ-ների բարելավման օրինակներ: Ուսանողների գործնական հմտությունների զարգացման նպատակով ՄՈՒՀ-ը շարունակաբար ներգրավում է գործատու-դասախոսների: Դասախոսների կողմից կիրառվող մեթոդները ուսանողակենտրոն են, բացի այդ թե՛ տեսական, թե՛ գործնական պարապմունքների հիմնական մասը իրականացնում են պրակտիկ մասագետները: Պրակտիկաների բազաները բազմազանեցված են ըստ մասնագիտությունների:

Դասապրոցեսի ընթացքում ուսումնառության նյութերի տրամադրումից բացի, ամբողջ մոդուլի նյութերը և հանձնարարությունները տեղադրվում են moodle հարթակում և ուսանողները հնարավորություն ունեն ցանկացած ժամանակ ուսումնասիրել դրանք:

Քոլեջն իր կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան որակավորում ունեցող կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, մեծ թվով պրակտիկ մասնագետներ: Դասախոսների ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով: Դասախոսական անձնակազմի գնահատման, կարիքների վերհանման համար գործում են մի շարք մեխանիզմներ՝ դասալսումներ, հարցումներ:

Քոլեջն ունի բավականին հագեցված նյութատեխնիկական բազա բոլոր կրթական ծրագրերի համար: Ձևավորված է կրթական գրավիչ և ուսումնական նպաստավոր մթնոլորտ: Ստեղծված է ապահով և անվտանգ միջավայր, այդ թվում՝ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը***

ՄՈՒՀ-ն ունի հստակ ձևակերպված առաքելություն, սահմանված իրատեսական նպատակներ ու խնդիրներ, որոնք հիմնականում արտահայտում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները և համահունչ են ՀՀ որակավորումների ազգային շրջանակին: Կառավարումը հիմնականում հիմնված է կոլեգիալության վրա. ապահովվում է ներքին և արտաքին շահառուների մասնակցությունն առանցքային որոշումների կայացմանը: Ռազմավարական նպատակների իրականացման համար քոլեջն ունի համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ:

Քոլեջն ունի առանձնացված ՈԱ ստորաբաժանում և աշխատակիցներ: Որակի ապահովման քաղաքականություն որպես այդպիսին առկա չէ: Որակի ապահովման ստորաբաժանման կողմից գնահատման հիմնական մեխանիզմը հարցումներն են, որոնց մեթոդաբանությունը դեռևս բավարար չէ և որոշումների կայացման վրա արդյունքներն առանձնապես ազդեցություն չունեն: Քոլեջի որակի ներքին ապահովման ենթակառուցվածքը դեռևս չի կարողանում հավաքագրել և վերլուծել անհրաժեշտ և հավաստի տվյալներ, որոնք պետք է հիմք հանդիսանան որոշումներ կայացելու համար:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը***

ՄՈՒՀ-ում առկա են ուսանողների ներգրավման հստակ մեխանիզմներ: Քոլեջը միտված է ուսանողների կրթական կարիքների վերհանմանը և արագ արձագանքմանը, ուսանողները հնարավություն ունեն ստանալու խորհդատվություններ և մասնակցելու վարպետաց դասերի: Քոլեջի վարչական կազմն ակտիվ համագործակցում է ուսանողների հետ վերջիններիս կարիքների բացահայտման և լուծումներ գտնելու գործում:

Քոլեջում գործում է զեղչային համակարգ և ուսանողների առաջադիմությունն ու ակտիվությունը գնահատող մեխանիզմներ, որը նպաստում է ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը, գործում է նաև ռոտացիայի հնարավորություն: Ձևավորված է ուսանողակենտրոն միջավայր:

Հետազոտական գործունեությունը ռազմավարական առաջնահերթություն չէ, այդուհանդերձ տարբեր ՄԿԾ-ներում, տարբեր մոդուլների և առարկաների դասախոսները կարևորում են ուսանողի կողմից իրականացվող ինքնուրույն, հետազոտական, ստեղծագործական աշխատանքները, որոնք տարաբնույթ են, պարունակում են հետազոտական բաղադրիչ և ապահովում են վերջնարդյունքով պահանջվող հմտությունների և կարողությունների ձևավորումը: Դասախոսական կազմը հրատարակում է մասնագիտական ձեռնարկներ, զարգացնում հեղինակային բաղադրատոմսեր, ստեղծում հեղինակային զարդեր և այլն:

Քոլեջն ունի ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ, գործում են հետադարձ կապի ապահովման արագ արձագանքող մեխանիզմներ: Հաշվետվություններում ամփոփվում են քոլեջի տարվա ընթացքում իրականացրած աշխատանքները, որոնք, սակայն չեն բխում քոլեջի սահմանած ռազմավարական ծրագրի դրույթներից, դրանք առավելապես նկարագրողական են և հիմնականում չեն պարունակում վերլուծական բաղադրիչ:

Քոլեջը հասարակությանն արժեքներ է փոխանցում «Ուրիշ» ուսանողական թատրոնի, Զբաղվածության կենտրոնի հետ համատեղ իրականացվող կարճաժամկետ կրթական ծրագրերի միջոցով: 2017 թվականից մեկնարկել է համագործակցություն ՄԱԿ-ի «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի հետ, որի շրջանակում Քոլեջը դարձել է ուսումնական կենտրոն. խոհարար վարպետ-դասախոսները վերապատրաստում են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի իրենց գործընկերներին:

Քոլեջի գործող Ռազմավարական ծրագրում արտաքին կապերին և միջազգայնացմանը վերաբերող դրույթներ կամ նպատակներ ամրագրված չեն, միջազգայնացումը ռազմավարական առաջնահերթություն չէ:

Ի տարբերություն միջազգային համագործակցությունների սահմանափակ փորձի, տեղական կազմակերպությունների հետ քոլեջի համագործակցությունները բավականին ակտիվ են. գործատուներն ունեն մասնակցություն ուսանողների ընթացիկ ուսումնառության գործընթացում, իրա-կանացնում են վարպետաց դասեր, նպաստում են պրակտիկայի արդյունավետ կազմակերպմանը:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - Ռազմավարական զարգացման ծրագրի կառուցվածքի հստակեցմանը, ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցի մշակման անհրաժեշտությանը,
   - գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական ու քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - գնահատում-բարելավում շրջափուլի գործիքակազմի բարելավմանը,
   - կրթական կարիքներից ելնելով՝ դասախոսների մասնագիտական վերապատրաստումների կազմակերպմանը,
   - հետազոտական ուղղությունների հստակեցմանն ու երկարաժամկետ և կարճաժամկետ պլաններում տեղայնացմանը,
   - հաշվետվություններում վերլուծական բաղադրիչ ներդրմանը՝ ապահովելով խնդիրների վերհանումը և բարելավումների պլանավորումը,

- ըստ կրթական ծրագրերի ընթացիկ և ամփոփիչ գնահատման հստակ չափանիշների և չափորոշիչների (ռուբրիկներ) մշակմանը և ներդրմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2024 թ.մարտի 26
ք.Երևան